



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

«12» հունիսի 2020թ.

№ 2/1959-ՎԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՆԱՐԻՆԵ ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ԿՈՇՏՈՅԱՆԻ ԵՎ ԱՆՆԱ ՆՈՐԻԿՅԱՆԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 49/2020 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Հյուսիսային մաքսատուն-վարչության ներքոհիշյալ աշխատակիցների նկատմամբ կիրառել «նախազգուշացում» կարգապահական տույժը.

1) մաքսային գործառնությունների բաժնի մաքսային տեսուչներ Նարինե Լյովիկի Աբրահամյան և Լուսինե Սարգսի Կոշտոյան,

2) փաստաթղթային հսկողության բաժնի մաքսային տեսուչ Աննա Խորենի Նորիկյան:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:



Recoverable Signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵ